ԳՐԱԽՕՍԱԿԱՆՆԵՐ

Եղիկ Ճերէճեան, *Մեծն Մուրատ (Համբարձում Պոյաճեան)*, Երեւան, ՀՀ ԳԱԱ Պատմութեան Ինստիտուտ, 2016, 248 էջ:

Մուրատը արեւմտահայութեան վաղեմի յեղափոխական առաջնորդներից էր, Օսմանեան Կայսրութեան հնագոյն ընկերվար կուսակցութեան ղեկավարներից ու խորհրդանշող հերոսներից (եւ հայոց մէկ այլ հերոսի՝ Ժիրայրի հարազատ եղբայրը), յետագայում՝ օսմանեան խորհրդարանի անդամ եւ Մեծ Եղեռնի զոհերից: Զարմանալի է՝ մինչ հիմա հատուկենտ հետազօտութիւններ են գրուել Մուրատի վերաբերեալ: Դրանցից առանձին գրքով տպագրուել էր միայն Սիրվարդի (Է. Գրիգորեան) մենագրութիւնը[1], որի առաջին հրատարակութիւնից անցել է 60 տարուց աւելի: Հետեւաբար, ինչպէս գրքի նախաբանում ակադեմիկոս Աշոտ Մելքոնեանն է նշում, վաղուց արդէն զգացւում է «*ժամանակակից գիտական պահանջքներին համապատասխանող ամբողջական մենագրութեան*» կարիքը: Թերեւս այս մտահոգութեամբ է՝ մի շարք գրքերի հեղինակ Տոքթ. Ճերէճեանն այս անգամ վերհանել Մեծն Մուրատի կենսագրութեան մանրամասները՝ ըստ էութեան նոր խօսք ասելով որքան յայտնի, նոյնքան էլ անծանօթ գործչի մասին:

Հեղինակը մաս է կազմում Պէյրութի *Արարատ* օրաթերթի խմբագրակազմին, 1992-2009 եղել է Լիբանանի խորհրդարանի անդամ: Հայ ընթերցողին նա քաջածանօթ է պատմագիտական իր մենագրութիւններով ու յօդուածներով, որոնց զգալի մասը նուիրուած է հայ ազգային-ազատագրական պայքարի գործիչներին:

Գիրքը սկսւում է հերոսի ծննդավայր Հաճընի ու ընտանեկան միջավայրի նկարագրութեամբ: Տարբեր աղբիւրների համադրութեամբ հեղինակը ճշտում է Մուրատի ծննդեան թուականը՝ 1860: Պատանի տարիքում Համբարձումը հաղորդակցւում է Հաճընում տիրող ազատատենչ մթնոլորտին՝ ե՛ւ իր գերդաստանի, ե՛ւ նշանաւոր ուսուցիչների՝ Է. Տնտեսեանի եւ Մ. Սվաճեանի միջոցով: 1885ից Կ.Պոլսի Բժշկական Կայսերական Ուսումնարանի ուսանող Համբարձումն իր յեղափոխական գործունէութիւնն է սկսում Հայոց Յեղափոխական Ընկերութեան շարքերում՝ ստանալով Մուրատ ծածկանունը: Յետագայում ընկերութիւնն ամբողջութեամբ միանում է Հնչակեան Կուսակցութեանը (այդ կազմակերպութիւնների միջեւ կապը հաստատուել էր Խրիմեան Հայրիկի միջոցով):

Գրքից տեղեկանում ենք, որ Մուրատը եղել է Գում Գափուի ցոյցի պահանջագրի խմբագրողներից: Ցոյցից յետոյ էլ սկսւում է նրա առաջին

հետապնդումը օսմանեան իշխանութիւնների կողմից. Մուրատի գլուխը գնահատւում է 2000 ոսկի: Գրքի էջերից ընթերցողի առջեւ յառնում է ըմբոստ, բայց եւ առօրեայ կեանքում համեստ եւ մաքուր մտաւորական-հայրենասէրի կերպարը: Հեղինակը մանրամասնօրէն եւ գիտական բազմակողմանիութեամբ ներկայացնում է, թէ ինչպէս եւրոպացի ընկերվարականների եւ հայ անուանի գրական գործիչների հետ յաճախադէպ հանդիպումներում բիւրեղացած Մուրատն իվերջոյ դառնում է 1894ի Սասնոյ ապստամբութեան ղեկավարը՝ «*ժողովրդի արդար շահուց արդար պաշտպանը*» (Հրայր Դժոխք): Ընթերցողն էլ ինքնըստինքեան կիսում է ապստամբութեան ղեկավարներին պատած երկուութիւնը. մի կողմից՝ անտանելի վիճակը հարստահարուող ու նուաստացուող Սասունում, միւս կողմից՝ զէնքի ու դրամական միջոցների անբաւարարութիւնն ու ազգային կուսակցութիւնների անմիասնական գործելակերպը, որ չքացնում էր յաջողութեան հասնելու յոյսերը: Ճերէճեանը գրքում փորձ է արել վերծանել Մուրատի՝ այդ դժուարագոյն ամիսների ծոցատետրը: Կարող է շփոթմունք յարուցել այն, որ Մուրատի այդ ձեռագրերը պահւում են ՀՅԴ դիւանում, բայց յայտնի է, որ Մուրատը, չնայած ունեցած տխուր փորձին, մնում էր առանց կուսակցական խտրութեան ժողովրդի ուժերի համախմբման կողմնակից եւ Սասունից թղթակցութիւններ էր յղում միաժամանակ ե՛ւ *Հնչակ*ին, ե՛ւ *Դրօշակ*ին: Նոյն գաղափարական ուղղութիւնը նա շարունակում է նաեւ աքսորից փախչելուց յետոյ՝ ջանալով հրաւիրել հայ յեղափոխականների խորհրդաժողով: Այսպէս, ծայրաստիճան քայքայուած առողջութեամբ էլ նա շարունակեց ազգանպաստ գործունէութիւնը. դեռ 1905ին՝ 101 տարուայ բանտարկութեան դատապարտուած աքսորեալի կարգավիճակում նա ընտրուել էր Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան (ՍԴՀԿ) Կենտրոնական Վարչութեան անդամ:

Մուրատը հանդիպումներ է ունենում աշխարհի բազմաթիւ երկրներում. յիրաւի աննախադէպ է նրա գործունէութեան աշխարհագրական ընդգրկումը: Մեծ էր Մուրատ-յեղափոխականի ժողովրդականութիւնը. ԱՄՆ քաղաքներ նրա այցելութիւններին անդրադարձել են նոյնիսկ տեղական մամուլի ամենածանրակշիռ թերթերը՝ *New York Times*ից մինչեւ *Boston Globe*, իսկ Եգիպտոսում նրան հանդիպած Երուանդ Օտեանը գրում էր. «*ազնուական դիմագծերով, չոր ու նիհար, ժամանակէն առաջ ծերացած, խոնարհ ու վեհերոտ մարդ մըն էր, որ բնա՜ւ չէր համապատասխաներ մեր երեւակայութան մէջ դրոշմուած Մուրատին: Բանտ, աքսոր, տառապանք մաշեցուցած էին այդ յեղափոխականը, խաթարած էին անոր ֆիզիկական մասը, բայց հոգին միշտ ըմբոստ, միշտ անեղծ էր, ինչպէս տեսանք, երբոր Մուրատ առաջին անգամ ի պատիւ իրեն կազմակերպուած գումարումի մը մէջ խօսեցաւ,*

պարզուկ ու անկեղծ հաւատքով մը՝ յեղափոխութեան եւ անոր վերջնական յաղթանակին վրայ» (էջ 115):

Օսմանեան սահմանադրութեան վերահաստատումից յետոյ, չնայած իշխող Իթթիհատի հանդէպ ընդդիմադիր լինելուն, նա վերադառնում է Կ.Պոլիս եւ կարճ ժամանակ անց Ադանա Նահանգի Գոզան Գաւառից ընտրւում օսմանեան խորհրդարանի անդամ՝ յատկապէս յիշարժան գործունէութիւն ծաւալելով Ադանայի կոտորածի ժամանակ: Յատկանշական է, որ հայ երեսփոխաններից միայն Մուրատն էր, որ մինչեւ վերջ դէմ եղաւ օսմանեան հայերի բանակային զինուորագրութեան օրինագծին. «*Հայ եւ թուրք կամ քիւրդ ցեղերուն մէջ խաղաղութիւնը կը հաստատուի կամ կոտորածը կը դադրի, երբ հայութիւնը կը զինուորագրուի ժանդարմիային եւ փոլիցիային կը մասնակցի, ապա թէ ոչ, կոտորածի սարսափը բնաւ չպիտի փարատի*»՝ գրում էր Մուրատը (էջ 166): Մուրատն իր խորհրդարանական ելոյթներում պաշտպանում էր ազգերի ինքնորոշումը, ժողովրդավարական ապակենտրոնացումը՝ տեղական ինքնակառավարման զարգացումը, ազգային փոքրամասնութիւնների դպրոցներին պետական աջակցութիւնը, զբաղւում էր գիւղերում ժողովրդական հաւաքներին արտօնութիւն տալու, աշխատաւորների իրաւունքների, պաշտօնեաների սանձարձակութեան, թափառաշրջիկների խնդիրներով, «հողային հարց»ով, այն է՝ սուլթանի օրօք հայ գիւղացուց բռնագրաւուած հողերի վերադարձի հեշտացմամբ: Կալուածատուրքերի հարցում նա կողմնակից էր «աստիճանական հարկման» տարբերակին, ինչով հակադրւում էր իթթիհատական ղեկավարներին (եւ հերթական անգամ խորհրդարանում փորձ էր արւում բռնի լռեցնել Մուրատին):

Երեսփոխաններ Մուրատը, Վարդգէսը եւ բուլղարացի Տալչեւն առաջարկում էին նոր անձնագրերում աւելացնել անձի ազգային պատկանելութիւնը: Մուրատի խօսքը՝ «*հայ մը իսլամ ալ կրնայ ըլլալ, բայց դարձեալ հայ է*», բանավէճի առիթ է դառնում: Ինչպէս գրքի հեղինակն է մեկնաբանում՝ «*ազգային պատկանելիութեան նշումը անձնաթուղթին մէջ՝ ի յայտ կը բերէր որ թուրքերը իրենք փոքրամասնութիւն են Օսմ. Կայսրութեան մէջ*» (էջ 182):

Մուրատը երեք այլ երեսփոխանների հետ կազմեց Թուրքիայի առաջին երեսփոխանական ընկերվարական խմբակցութիւնը: Նա, ըստ էութեան, հաւասարութեան եւ ազատականութեան գաղափարների ջատագովն էր՝ մարդու եւ անհատի իրաւունքների պաշտպանը, հեռու ազգայնական որեւէ դրսեւորումներից. այդ իմաստով նրա շատ տեսակէտներ ժամանակից առաջ էին անցել:

Առաջին անգամ մանրամասն եւ տարատեսակ գիտական աղբիւրների հիման վրայ անդրադարձ է կատարւում այն փաստին, որ Մուրատի երեսփոխանական պարտականութիւններն աւարտուել էին դեռեւս 1912

Յունուարին եւ պարզաբանում է, թէ ի՛նչ պատճառներով նա յաջորդ ընտրութիւններին հանեց իր թեկնածութիւնը յօգուտ մէկ ուրիշ հայի՝ Իթթիհատի անդամ Մ. Նալպանտեանի: Այդուհանդերձ, Մուրատը շարունակում է իր գործունէութիւնը որպէս Հայկական Նահանգների բարեկարգումների հարցը հետապնդող Ապահովութեան Յանձնաժողովի անդամ:

Նկատի ունենալով արեւմտահայութեան ուժասպառ վիճակը, Մուրատն առաւել չափաւորական կեցուածք էր որդեգրել, կողմնակից էր ՍԴՀԿ օրինական գործունէութեանը եւ չէր ողջունում 1913ի ՍԴՀԿ Է. Համագումարի՝ Իթթիհատի ղեկավարութեանը ոչնչացնելու որոշումը (այս առիթով Ճերէճեանը մէջբերում է Փարամազի խիստ խօսքերը Մուրատի վերաբերեալ): Պիտի յաջորդէին սեւ օրերը եւ շինծու մեղադրանքների հիման վրայ դատապարտուած ու անմարդկային չարչարանքների ենթարկուած Մուրատը պիտի կախաղան հանուէր Կեսարիայում՝ նուաստացումների ենթարկուելով մինչեւ իսկ մահուանից յետոյ:

Կարեւոր է, որ գիրքն ընթերցողին անընդմէջ մտածելու եւ վերլուծելու առիթ է տալիս: Յատկապէս անմիանշանակ, վիճելի դէպքերում հեղինակը ջանում է առարկայօրէն ներկայացնել բոլոր տեսակէտները (առկայութեան դէպքում՝ նոյնիսկ թուրք հեղինակների)՝ եզրակացութիւնները թողնելով ընթերցողին:

Անշուշտ, ցանկալի կը լինէր, որ հեղինակն անդրադառնար Մուրատի կենսագրութեան այնպիսի հետաքրքրական հարցերի եւս, ինչպէս Մուրատ մականուան ծագումը կամ սուլթան Համիդի հետ կալանաւոր Մուրատի առերեսման պատմութեան[2] իսկութիւնը:

Յատուկ պէտք է նշել, որ գիրքը գրուած է ճոխ եւ անաղարտ արեւմտահայերէնով: Յիրաւի կարեւոր մի աշխատանք, որ, յուսանք, իր շարունակութիւնը կ'ունենայ:

ԱՇՈՏ ԳՐԻԳՈՐԵԱՆ
ashotarmenia@yahoo.com

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] Սիրվարդ, *Մեծն Մուրատ (Համբարձում Պոյաճեան)*, Երեւան, ՀՀ ԳԱԱ Հրատ., 1991:

[2] Սիրվարդ, էջ 26-29. նաեւ՝ Արսէն Կիտուր, *Պատմութիւն Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան 1887-1962, Ա. Հտր.*, Պէյրութ, Տպ. Շիրակ, 1962, էջ 147-148: